

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-565-14.04.2020-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծի ընդունման հիմնավորման համաձայն՝ նախագծի ընդունումը դրական ազդեցություն կունենա Հայաստանի Հանրապետությունում համաճարակի տարածման հիմքով արտակարգ իրավիճակի պայմաններում հայտարարված արտակարգ դրության հետևանքով առավել տուժած ոլորտների ձեռնարկությունների գործունեության վերականգնման և հետագա առողջացման գործընթացի վրա:

1. Աջակցության այս գործիքի կիրառությունը լրացուցիչ քննարկման և հիմնավորման կարիք ունի՝ հաշվի առնելով նախ և առաջ այն հանգամանքը, որ այդ գործիքակազմի միջոցով հնարավոր չէ ապահովել աջակցության հասցեականություն: Մասնավորապես, խնդիրը կայանում է նրանում, որ արդյունավետ հարկային վարչարարության տեսանկյունից գործնականում դժվար է հարկային պարտավորությունների կատարման ժամկետի հետաձգման հնարավորությունը տրամադրել միայն առավել մեծ չափով տուժած ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին, իսկ մյուս կողմից՝ նշյալ հնարավորությունը բոլոր տնտեսավարող սուբյեկտներին տրամադրելը բացի այն, որ բավարար չափով հիմնավորված քայլ չի լինի, նաև կհանգեցնի հարկային կարգապահության նվազման՝ դրանով իսկ վտանգելով հարկային եկամուտների հավաքագրման բնականոն գործընթացը:

Փոխարենը, պետական աջակցության գործիքների հասցեականությունն ապահովելու նպատակով նպատակահարմար է գտնվել համավարակի բացասական ազդեցությունը կրող ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին աջակցել բյուջետային աջակցության գործիքակազմով, և այդ կապակցությամբ, ինչպես հայտնի է, կորոնավիրուսի տնտեսական հետևանքները մեղմելուն ուղղված՝ Կառավարության կողմից ընդունված ծրագրերի շրջանակներում հնարավոր է պետական աջակցություն ստանալ ինչպես այլ կարիքներ հոգալու, այնպես էլ հարկային պարտավորություններ կատարելու նպատակով: Այս առումով, ստեղծված իրավիճակում պետական բյուջեի եկամուտների բավարար մակարդակ ապահովելու և Կառավարության ստանձնած պարտավորություններն ու բյուջետային աջակցության վերոնշյալ լայն գործիքակազմը հաջողությամբ կիրառելու համար անհրաժեշտ է, որպեսզի համավարակից

առանձնապես չտուժած ոլորտների տնտեսավարող սուբյեկտները ժամանակին և ամբողջ ծավալով կատարեն իրենց հարկային պարտավորությունները:

2. Շրջանառության հարկի գծով հաշվարկվող հարկային պարտավորությունների կատարման ժամկետի հետաձգման կապակցությամբ անհրաժեշտ է հաշվի առնել, որ գործունեություն չիրականացնելու պարագայում նշյալ տնտեսավարող սուբյեկտների մոտ այդ գործունեության տեսակների մասով շրջանառության հարկով հարկման բազա, հետևաբար նաև՝ շրջանառության հարկի գծով հարկային պարտավորություն չի առաջանում: Ուստի, այս մասով հարկային պարտավորությունների կատարման ժամկետի հետաձգման անհրաժեշտությունը բացակայում է:

3. Ինչ վերաբերում է շահութահարկի գծով հաշվարկվող կանխավճարների կատարման ժամկետի հետաձգմանը, ապա այդ կապակցությամբ հարկ ենք համարում նկատել, որ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով տնտեսավարող սուբյեկտներին հնարավորություն է ընձեռված շահութահարկի կանխավճարները կատարել օրենսգրքի 135-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված այլընտրանքային եղանակով, որի դեպքում տնտեսավարող սուբյեկտները շահութահարկի կանխավճարները կատարում են ոչ թե նախորդ տարվա շահութահարկի գումարի 20 տոկոսի չափով, այլ նախորդ եռամսյակի ընթացքում ապրանքների մատակարարումից, աշխատանքների կատարումից և (կամ) ծառայությունների մատուցումից ստացվող եկամուտների երկու տոկոսի չափով:

Համաճարակի հետևանքով ստեղծված տնտեսական իրավիճակում շահութահարկ վճարողների մոտ առկա շրջանառու ֆինանսական ռեսուրսների պակասի հետ կապված խնդիրները հաղթահարելու նպատակով Կառավարությունում ներկա փուլում քննարկվում են շահութահարկի կանխավճարների համակարգում վերանայումներ կատարելու հնարավորություններն ու նպատակահարմարությունը: Միննույն ժամանակ, հաշվի առնելով այն, որ այս հարցը պետական բյուջեի ընթացիկ հարկային եկամուտների տեսանկյունից խիստ զգայուն հարց է համարվում՝ անհրաժեշտ է այս հարցը քննարկել զգուշավորությամբ: Այս առումով, հայտնում ենք, որ խնդրո առարկա հարցի վերաբերյալ դեռևս վերջնական որոշում չի ձևավորվել: Միննույն ժամանակ, օրենսդրական նախաձեռնության հեղինակին առաջարկում ենք այս մասով համագործակցել Կառավարության հետ՝ ակնկալելով խնդրի համապարփակ լուծում:

Հարկ է նաև նշել, որ Նախագծով առաջարկվող իրավադրույթների նախատեսումը առավելապես պայմանավորված է ներկայումս նոր կորոնավիրուսային հիվանդության

տարածման հետևանքով հայտարարված արտակարգ դրությամբ: Մինչդեռ հարկ է նկատել, որ «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից բխում է, որ արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում կիրառվելիք միջոցառումների և դրա ընթացքում իրավունքների, ազատությունների սահմանափակումների շրջանակը կարող է տարբեր լինել՝ պայմանավորված տվյալ պահին ստեղծված իրավիճակով, ուստի անձի իրավունքների և ազատությունների սահմանափակումներին համընթաց, դրա ընթացքում կիրառվող անհրաժեշտ միջոցառումները նույնպես պետք է իրավիճակային լինեն, այլ կերպ ասած՝ պայմանավորված լինեն և բխեն արտակարգ դրության հայտարարման համար հիմք հանդիսացած կոնկրետ իրավիճակից և դրանում առկա հանգամանքերից:

Տվյալ պարագայում գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում նման դրույթների նախատեսումը ըստ էության պայմանավորված է միայն ներկայումս ստեղծված իրավիճակով, այլ կերպ ասած՝ նեղ իրավիճակային լուծում է: Դրա մասին են փաստում հենց Նախագծով նախատեսված որոշակի ոլորտներում գործունեություն իրականացող տնտեսավարողներին պետության կողմից հարկային արտոնություններ տրամադրելու վերաբերյալ իրավակարգավորումները, այնինչ այս առումով հարկ է նկատի ունենալ, որ համաճարակի հիմքով արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում՝ պայմանավորված ստեղծված իրավիճակով՝ դրանում առկա հանգամանքների գնահատման արդյունքում կիրառվելիք միջոցառումների, իրավունքների և ազատությունների սահմանափակումների շրջանակը յուրաքանչյուր դեպքում կարող է տարբեր լինել, մասնավորապես՝ կախված համաճարակի բնույթից կիրառվող սահմանափակումները կարող են վերաբերելի լինեն այլ տնտեսավարող սուբյեկտների նույնպես, կամ առհասարակ վերաբերելի չլինեն: Հետևաբար հիմնավորված չէ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով յուրաքանչյուր դեպքում համաճարակի հիմքով արտակարգ դրություն հայտարարվելու պարագայում նման հարկային արտոնությունների նախատեսումը:

Ամփոփելով վերոգրյալը՝ առաջարկում ենք նախագծով քննարկվող հոդվածը թողնել անփոփոխ: